ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿԱՐԱՊԵՏ ԿՈՒՍԻԿՅԱՆԻՆ

Ականատեղծ Ալեքսանդր Ծատուրյանը (1865—1917) լայն նամակագրություն է ունեցել ժամանակի գիտնականների, գրողների և այլ գործիչների, այդ թվում նաև գրականագետ, լեզվաբան, Մոսկվայի Հազարյան հեմարանի երկարամյա մանկավարժ Կարապետ Կուսիկյանի (1864—1915) հետ։

Նամակներում արծարծվում են հասարակական և բանասիրական կարևորություն ունեցող խնդիրներ, բացահայտվում են նաև երկու մտավորականների կյանքի և գործունեության մեզ անհայտ էջեր։

Նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Կ. Կուսիկյանի ֆ., փաստաթուղթ № 246—249)։

ՎԱՐՈՒԶԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2 հոկտեմբեր, 1910
Թալին

1

Սիրելի Կարապետ

Ահա 2 շաբաթ է արդեն որ վայելում եմ Խրիմի հրաշալիքները, կամ, ավելի ճիշտն ասած՝ բարիքները—անամպ երկինք, ոսկեշող արև, կապույտ ծով, թավածիլ բնություն... ո՞ր մեկն ասեմ, ո՞ր մեկը թվեմ... միայն ափսոս, որ վայելքս լիամաս չէ։ Խրիմի դալարագեղ ափերը ոտք դնելուցս օրից սկսվել է անիծյալ գլխացավս և այս «գեղեցիկ աշխարհը» սևացնում է աչքիս...։ Առավոտից մինչև երեկո, երեկոյից մինչև առավոտ գլխացավս չի կտրում։ Լինում են շատ կարճատև ընդմիջումներ միայն։ Զրկված եմ կարդալու, մեկի հետ մի 1/2 կամ 1/4 ժամ մտքերի տեղական փոխանակություն ունենալու կարողությունից, էլ չեմ խոսում պարապելու, գրելու, ստեղծագործելու մասին, դե կարող ես երևակայել իմ հոգեկան դրությունը։ Այս «գեղեցկության ծովում» ես նման եմ այն նավին, որի նավապետը հիվանդ է... Մարդուս գլուխն էլ նավապետի պես մի բան է։ Լավ է, որ դոնե Վերա Ստեպանովնան[1] հետս է։ Նա կարդում է ռուերեն կամ հայերեն թերթեր, գրքեր, իսկ ես ականջ եմ դնում։ Իմ հոգեկան տանջալից վերապրումը կարող է զգալ խորունկ միայն տիկին Նունեն[2], որ նույնպես ենթակա է այդ ցավին։

Է՜հ, բավական է գլխացավիս մասին, վախենում եմ գլխացավովս քո գլուխն էլ ցավեցնեմ։

Ի՞նչ նորություններ կան Մոսկվայում։ Ի՞նչ են փսփսում մեր զեկուցագրի մասին։ Տեսա՞ր բժ. Սուրենյանցը какой фортель викинул! *Արդյոք դու կարդացի՞ր նրա առանձին կարծիքը։ Իմ կարծիքով, նա պիտի կարդար մեզ իր «հավելումը», որպեսզի մենք էլ հարկ եղած դեպքում մեր ասելիքն ասեինք։*

Մեր զնկուցագրի սևը (մեր մեջ մնա) Ստ. Մամիկոնյանի[1] մոտ է։ Խնդրեց, որ իր մոտ թողնեմ, որպեսզի ընդհանուր ժողովի ժամանակ օգտվի։ Եթե քեզ հարկավոր գա, կարող ես ստանալ նրանից։

Երեկ քեզ մի քիչ խաղող ուղարկեցի, ընտանիքովդ միասին անուշ արեք։ Ներփակ ուղարկում եմ անդորրագիրը։ Խաղողն ուղարկված է с доставкой на дом, ուրեմն ուղղակի տունդ կբերեն։ Ոչինչ չպետք է վճարես, ամեն ինչ վճարված է։

Սիրալիր ողջույններս տիկին Նունեին և ճուտերիդ։

Հասցես՝ Ялта, Аутская ул., студия Воронкова—ինձ։

28 հոկտ., 1911
Մոսկվա

2

Սիրելի Կարապետ

Ուրախ եմ, որ բնակավայրիդ դեմքն ու գույնը այնքան հրապուրիչ են և նույնիսկ բանաստեղծական տրամադրություն են ներշնչում հոգուդ։ Ներշնչվիր, բարեկամ, ներշնչվիր, հանգստի և անդորրի քաղցրությամբ արբեցած՝ ջան ասա, ջան լսիր գեղածիծաղ բնության ծոցում, կեր, խմիր, նայիր, հիացիր ագահորեն և անհագորեն. կգա ձմեռը և նորից կսկսվի «վարժապետական» շարքաշ կյանքդ, նորից դասագիրք ու տետրակ, նորից դասարան և ուսուցչանոց, նորից մայրաքաղաքի պրոզայական «ասե-կոսեներ»...։

Ես էլ ուրախությամբ կփախչեի այս մեծ քաղաքի անկյունի քար ու երկաթից, խեղդուկ մթնոլորտից, սրտամաշ ժխորից, բայց ինչ արած—«անճարը կերել է բանջարը», հնարավորություն չունեմ, նյութական հանգամանքները՝ չեն ներում։ Մտադիր եմ աշնանը դարձյալ դեպի հարավ...

Ուղարկում եմ քեզ մեր պատասխանը պ. Մելիքյանին[1] և Զալիուշյանի պատասխանս՝ քեզ։ Այս անգամ արդեն Դոնի ափերին ապրող հրապարակախոսը[3] միանգամայն կորցրել է իր ողջախոհության «դավթարները»... իր այս պատասխանում նա հասնում է կատարյալ ցինիզմի... ասել որ ոչ մի հայ բանաստեղծ, ոչ մի հայ հրապարակախոս, ոչ մի հայ գրքի ու մտքի մշակ մեր կյանքում չեն արել այն, ինչ որ արել է մի հայ վաճառական աղա Լազարյանը—դա իմ կարծիքով մտքի պոռնկություն է... ուրեմն Աբովյանի, Նալբանդյանի, Արծրունու, Գամառ-Քաթիպայի, Բաֆֆու վրա, որոնք հեզաշրջել են մեր բովանդակ կյանքը, պետք է խաչ քաշել և արձան կանգնելով աղա Լազարյանին, արձանի տակ, իբրև թղուկներ, բերել, շարել մեր կյանքի այդ կարապետներին, որ նրանք ներքևից վերև նայեն...։

Դոնի ափին ապրող հրապարակախոսը հայտնում է մի նոր ճանճաբեղ միտք. նա ասում է. գաղափարը պիտի ծառայէ մարդուն և ոչ մարդը—գաղափարին, եվ նա ծաղրում է գաղափարին ծառա, գաղափարին ստրուկ լինելը. Այո, սիրելի Կարապետ, ամեն մարդ իրավունք ունի խելոտ լինելու, բայց այդ իրավունքը նա ի չարն է գործադրում—նրան պիտի կապոտել և в желтый дом...։

Իմ կարծիքով, Կարապետ, դու այժմ պիտի թողնես ակադեմիական աթոռդ և այլ...* այլ տոնով մի լա՜վ շշպոնս նրան. էնպես պիտի գլուխը սապնել, որ կյանքում չմոռանա...։ Եվ դա պիտի լինի քո վերջին պատասխանը։

Խեղճ Ազայանն էլ մեռավ։ Երևի այդ տխուր լուրը արդեն հասել է ականջիդ։ Այստեղից, մի խումբ հարկողներից հեռագրեցի, որ պսակ դնեն, իսկ հոգեհանգիստ կատարեցինք։ Իմ կողմից էլ առանձին ցավակցական հեռագիր ուղարկեցի։

Տեղական նորություններ—Մեռավ Սարդիս Ջանումյանը[4]. էջմիածնի ճեմարանին կտակել է 80000 ռ. սաներ պահելու։ Էջմիածին, Էջմիածին—զահլա տարան, Կարապետ։ Հայ հարուստի բորբոսնած և մոլեռանդության տիղմի մեջ թաղված հոգին իր փրկությունը շարունակ որոնում է ֆարաջայի փեշերի տակ և պարտք է իր ունեցածի մի մասը միշտ ֆարաջայի փորն ածել...։

Այստեղ է Լևոն Սարդսյանը[5]։ Էլի էն Լևոնն է, չի փոխվել, մի քիչ պառավել է միայն։ Միշտ տեսնվում ենք, ասում խոսում ենք դեսից-դենից։ Անցյալ օրն ինձ մոտ էր Ճաշի Ստեփանի[6] և Առաքելի[7] հետ միասին։ Մանոթացավ տիկնոջ[սի] հետ։

Շատ, շատ բարևում է տիկինը։ Պողոսին[8] ասացի ինչ որ գրել էիր։ Հազար բարևներս պատվական տիկին Նունեին, դստրիկիդ։

Սիրո համբույրներով սեղմում եմ ձեռքդ քո Ալ. Մատուրյան

4 օգոստոս, 1911
Մոսկվա

3

Սիրելի Կարապետ

Սպասում էի «Հորիզոնին», որպեսզի նամակիդ պատասխանն ուղարկեմ հոդվածիդ հետ միասին։ Բայց սպասելս ապարդյուն անցավ։ Ինչպես երևվում է «Հորիզոնն» անհարմար է գտել պատասխանը տպագրելու։ Չգիտեմ, ի՞նչ ես գրել, ի՞նչ պատասխան ես տվել հարուստների խնկարկու պր. Ջալ-խուշյանին, որ «Հորիզոնն» էլ սիրտ չի անում գրածիդ տեղ տալու իր էջերում, եթե պատասխանդ այս անգամ չափազանց խիստ ու կծու է։ Բայց մի՞թե «Հորիզոնը» քաշվում է կամ վախենում է Դոնի ափերին կաքավող այդ Ջալ-խուշից, որը իր հրապարակախոսական դավանանքներով ու համոզումներով իսկ որ Ջալխուշ է... (пестрая птица)։ Եթե հիրավի վախից է, որ «Հորիզոնը» չի տպում քո պատասխանը, զարմանում եմ..., բայց եթե ունի այլ հարդելի պատճառներ ու նկատումներ—դա ուրիշ խնդիր է։ Բայց և այնպես, լավ կանես դու մի բաց նամակ ուղարկես, իմանաս հոդվածիդ վիճակը և, եթե չէն տպելու, նույնը համապատասխան ծանոթագրությամբ հանդերձ ղրկես «Սուրհանդակին», որը անտարակույս կտպի։ Մեծ հաճույքով կարդացի, սիրելի Կարապետ, քո գեղեցիկ և պատկերավոր համեմատությունները այդտեղի և այստեղի մասին... կարդացի այդ փոքրիկ ժողովածուի և հայերիս բնույթների, մտաշխարհների բնորոշումներից...։

* Բառը անընթեռնելի է—Վ. Վ.։

** Կրճատումը հրապարակողինն է։

Ցույց տուր ինձ մեր կյանքում այն քաղաքակրթական գործոնները, որոնց մենք ազգային ինքնագիտակցության, ազգային ինքնապատվության զգացումներով սիրո՛ւմ, խնամո՛ւմ ու փայփայում ենք... ունենք մայրենի գրականությո՛ւն, մայրենի մամո՛ւլ, ստեղծագործ մտքեր, գրչի մշակներ, բայց... վա՛յ նրանց օրին ու հային... ընկած են աչքից, մատնված են խայտառակ անտարբերության...։ Ունենք մայրենի գպրոց, քրտնաջան ուսուցիչներ և ուսուցչուհիներ, բայց... այդ խեղճերը քաղցից ու անապահովությունից առաջ են ծնվում...։ Ունենք մայրենի թատրո՛ն, բեմի անձնվեր, մոլեռանդ մշակներ, բայց ինչ է նրանց վիճակը—փուշ ու տատասկ, կիսամաշ մաքառումն անապահովության և հասարակական անտարբերության դեմ... վերջապես, ունենք իրավունք, որը ներկա պայմաններում մի անհասկանալի հրաշքով է տրված մեզ—կանգնելու հավերժական կոթող մեր գրական նահապետին՝ «Վերք Հայաստանի»-ի մեծանուն ողբերգվին. կանգնելու այն էլ բաց երկնքի տակ, մայր երկրում, ի տես աշխարհի։ Եվ մենք ինչպե՞ս ենք պատասխանում այդ եղակի իրավունքին։ Ահա համարյա երկրորդ տարին է, որ մեր ազգային ինքնաճանաչությունն ու ինքնապատվությունը, մեր կուլտուրականությունն ու մտավոր հասունությունը նվիրաբերել ենք ազգային այդ մեծ գործին ընդամենը ...2000 ռուբլի։

Էհ, ո՞ր մեկը թվեմ, սիրելի Կարապետ...։

Միակ բախտավոր բացառությունը մեր կյանքում սառարախտաբար առաքելական եկեղեցին է, այն քավթառած եկեղեցին, որի պատերը դեռ սիրում ենք և շարունակում ենք անմտությամբ լիզել...։ «Տիրացուս» հայերս մեր խնամքն ու հոգացությունը չենք խնայում միայն այդ հոգեսպան վայրի համար, որի սպասավորներն էլ՝ կարճ-խելք և երկար մորուս, անիրավաբար ապրում են և՛ կուշտ, և՛ ապահով...։

Սիրելի Կարապետ, նայելով մեր այս տխուր, մեր այս անբովանդակ, անիմաստ ներկային՝ ես մտածում եմ, որ մեր արդի գոյության իմաստն իսկապես լոկ պատմական է, որ մենք մի տեսակ հնագիտություն ենք միայն... և ուրիշ ոչինչ...։

Կարճում եմ խոհերս, որպեսզի պղտորած չլինեմ քո այն անհույզ անդորր տրամադրությունն, որ այնպես շռայլորեն պարգևում է քեզ ապրածդ վայրի շինարար կյանքը, բնության գեղեցկությունը, մարդկանց ստեղծագործ և հայրենաշունչ ոգին...։

Մի բանի համար միայն շատ դժգոհ եմ քեզանից, Կարապետ։ Ապրելով այդտեղ դու միանգամայն որդեգրել ես Մուսային. այնքան ոգեշունչ և պատկերավոր են նամակներդ։ Բայց մեր տղա, իսկի մտածում ես, որ դրանով դու «առանց էն էլ քաղցած, խեղճ ու կրակ բանաստեղծներիս» հացն ես կտրում...։ Ես, իհարկե, իմ դարդումը չեմ. փեշակակից եղբայրներիս հոգն եմ քաշում...։ Փառք աստծո, ազգն ինձ այնպես ապահովեց, որ հավիտյանս հավիտենից կարող եմ թագավորի պես ապրել...։

Տգեղքն արդեն հավաքվել են՝ այստեղ են Վահանը[1], Կարեն Միքայելյանը[2], Պողոսն էլ հո դե սաղ ամառ ինձ նման, էրվում ու խաշվում էր էս քարաշեն-երկրաշեն դժոխքում, որի անունն է՝ Մեծ քաղաք...։ Կարենը եղել է Պոլսում նոր և հետաքրքրական շատ բան է պատմում նորոգված Թյուրքիայի կեղծ ու շինծու սահմանադրական կյանքից... բանից երևում է, որ այդ սահ-

մանագրական նորատունկ ու նորաբույս ծառից հայերը դարձյալ միևնույն դառն պտուղներն են քաղում, ինչ որ Համիդի ժամանակն էր...։

«Հորիզոնն», ինչպես քեզ հայտնի է, մեր խմբական պատասխանի տակ գետեղված իր ծանոթությամբ խոստացել էր նորից վերադառնալ մեր բանակովի խնդրին։ Սակայն խոստումը մինչև օրս խոստում էլ մնաց։ Ձայն ծպտուն չի հանում...։ Եվ շատ էլ լավ է անում, որովհետև, վիճելի խնդիրն այնպիսի մի կույտ է, որ ինչքան շատ քրքրե, այնքան անախորժ հոտ կբարձրանա «Հորիզոնի» համար...։

«Լևոն փաշան»[3] արդեն ճանապարհվեց դեպի իր պաշտոնատեղին։ Դանդաղաշարժ Ստեփանը[4], դե գիտես էլի, ինչ է անում—սուսուփուս ման է գալիս կյանքի խնդիրները խմորի պես շարունակ հունցում է իր մտքի տաշտում, բայց թե երբ պետք է մի օր մեյդան դուրս գա և բան թխի, աստված գիտի։ Առաքել Դերվիշն էլ Պարսկաստանի վիճակն է վճռում, իսկ գիշերնեբը այս ու այն «արտիստկայի» փեշերի թոզն է սրբում...։

Ջերմագին ողջույնս տիկ. Նունեին,

սեղմում եմ ձեռքդ քո Ալ. Մատուրյան

Անթվակիր

4

Կարապետ

Երկու օր է տնից դուրս չեմ գալիս, հիվանդ եմ և հազիվ թե վաղն էլ կարողանամ դուրս գալ։ Ցավում եմ, որ վաղվա ժողովին «Կոնտինենտալ» հյուրանոցում չպետք է կարողանամ ներկա գտնվել, էհ, ինչ արած, առանց ինձ ժողով արեք, վճռեք ինչ որ պետք է և գործին ցանկալի ընթացք տվեք։ Աստված սիրեք իմ պատճառով ժողովը մի հետաձգեք, էլ հետաձգելու ժամանակ չկա, շուտով մենք ամենքս էլ ցրվելու ենք դես ու դեն, ցանկալի է որ մեր գնալուց առաջ այդ «Մեսրոպյան մատենադարանի»[1] խնդիրը մի որոշ լուծում ստանա։ Իմ տեսակետը, իմ հայացքներն այդ խնդրի նկատմամբ թե՛ քեզ, թե՛ Պողոսին արդեն հայտնի են։

Քո Ալ. Մատուրյան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Վերա Ստեփանովնա—Ալեքսանդր Մատուրյանի կինը։
2. Կուսիկյան Նունե—Կարապետ Կուսիկյանի կինը։
3. Ստեփան Մամիկոնյան—իրավաբան, բանասեր, Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս, խմբագրել և հրատարակել է «Խոսք» պարբերականը (Մոսկվա), եղել է Մոսկվայի հայ համայնքի կոմիտեի նախագահ։

2

1. Մելիքյան—մշակութային և հասարակական գործիչ։
2. Ձալխուչյան Գրիգոր Խաչատուրի (1861—1939)—իրավաբան, հրապարակախոս, հասարակական գործիչ։

3. Նկատի ունի Գ. Ջալխուշյանին, որը բնակվում էր Նոր Նախիջևանում

4. Սարգիս Ջանումյան—մեծահարուստ վաճառական։

5. Սարգսյան Լևոն Թուրենի (1862—1936)—բանաստեղծ, պատմաբան, հրապարակախոս, խմբագիր։ Սովորել է Լազարյան ճեմարանում։ Ավարտել է Մոսկվայի կայսերական համալսարանը։ Պաշտոնավարել է Լազարյան ճեմարանում, Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, խմբագրել է «Մուրճ» ամսագիրը։ Գրել է «Ժողովրդական կրթության գործը մեզանում», «Հին ցավ», «Մայրենի խոսք» աշխատությունները։

6. Նկատի ունի Ստեփան Մամիկոնյանին։

7. Նկատի ունի Առաքել Դեղվիշին—բանաստեղծ, լրագրող։

8. Նկատի ունի Գոգոս Մակինցյանին։

3

1. Նկատի ունի բանաստեղծ Վահան Տերյանին։

2. Միքայելյան Կարեն Սարգսի (1883—1941).—գրող, հասարակական և մշակութային գործիչ։

3. Ակնարկում է Լևոն Սարգսյանին։

4. Նկատի ունի Ստ. Մամիկոնյանին։

4

1. «Մեսրոպյան մատենադարանը—հայ գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված «Հանրամատչելի Մեսրոպյան գրադարան» մատենաշար. Լազարյան ճեմարանի գիտական խորհուրդը այդ առթիվ մրցույթ էր հայտարարել։